ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ԵՐԵՍՈՒՆ ՀԱԶԱՐ ՕՐ

Մոսկվայում, Նալիչնայա փողոցի վրա, ուղիղ դեմ-դիմաց, գտնվում են մի ծննդատուն և մի գերեզմանատուն: Առաջինի համեստ մուտքի մոտ, փոքրիկ ցուցանակի վրա, մանր տառերով գրված է «Ծննդատուն № 19»: Մյուսի հանդիսավոր դարպասի վերևում խոշոր տառերով ազդարարված է՝ «Վվեդենսկի գերեզմանատուն»:

Իրար դեմ-դիմաց, աշխարհ են գալիս դեռևս անանուն, դեռևս կենսագրություն չունեցող արարածներ՝ ուրախացնելով իրենց ծնողներին և նրանց մտերիմներին: Եվ աշխարհից հեռանում են ապրած մարդիկ՝ տխրեցնելով մարդկային ավելի մեծ կոլեկտիվներ՝ մի գործարան, մի հիմնարկ, ամբողջ քաղաքը և երբեմն նույնիսկ ամբողջ հայրենիքը և անգամ՝ ամբողջ աշխարհը:

Դրա համար էլ, ահա, մարդկային ծնունդներն ավետում է փոքրիկ ցուցանակը՝ մանր տառերով, իսկ մարդկային մահը գուժում է հանդիսավոր կամարը՝ խոշոր տառերով:

Կյանքի առաջին ու վերջին կայաններն իրարից անջատված են ընդամենը մի նեղ փողոցով: Բայց տագնապով մի՛ նայեք լուսամուտից դուրս, այդ փողոցին, ով երջանիկ մայրեր: Եվ թող չմոլորեցնի ձեզ դրա նեղ լինելը: Մինչև որ ձեր որդին անցնի մի մայթից մյուսը, նա պետք է կտրի երեսուն հազար օրվա ճանապարհ: Նա ձեր թևերի վրա պիտի նախ գնա տուն, տարիներ շարունակ մնա այնտեղ՝ ամեն օր զբոսանքի դուրս գալով մոտակա պուրակը: Ապա պիտի հաճախի մանկապարտեզ, դպրոց, գործարան, ինստիտուտ... Նա պիտի գնա տուրիստական ճանապարհորդությունների, ծովափ՝ հանգստանալու, լեռները՝ հանքեր որոնելու, երկրի սահմանները՝ հայրենիքը պաշտպանելու... Նա ձեռք պիտի բերի ընկերների ու բարեկամների, պիտի սիրի, ամուսնանա, ունենա երեխաներ... Նա պիտի կատարի հոգուտ մարդկանց գործեր, գուցե և սխրագործություններ…

Երեսուն հազար օր նա պիտի շրջի աշխարհում, հրճվի արևով, բնությունով, մարդկանցով և դարերի ընթացքում նրանց ստեղծած բարիքներով, օդ պիտի շնչի, ստանա հազար ու հազար տպավորություններ, ունենա հազար ու հազար հույզեր…

Ահա այդքան լայն է այդ նեղ փողոցը, ով երջանիկ մայրեր: Երեսուն հազար օր է ընկած դրա երկու մայթերի միջև:

Եվ երբ մի օր, արդեն ապրած, վաստակած և խոնջացած, նա արդեն կտրի-անցնի այդ փողոցը, դիմացի կողմում նա այլևս չի գտնի «Վվեդենսկի» բառը, որովհետև դա կրոնական բառ է՝ «Ընծայման», մոտակա եկեղեցու անունով: Նա չի գտնի նաև «գերեզմանատուն» բառը, հանդիսավոր դարպասը, գերեզմանատունը՝ մեռածների այդ սգավոր թաղամասը: Դրա փոխարեն դիմացի կողմում կանգնած կլինեն ապրող մարդկանց բազմաթիվ բազմահարկ տներն իրենց բակերով, պուրակներով, փողոցներով…

Իսկ նրան՝ ապրածին, վաստակածին և խոնջացածին, կտանեն ապրող մարդկանց աչքից հեռու գտնվող, քաղաքի ծայրում աննկատելիորեն տեղավորված կրեմատորիան և կայրեն, որպեսզի նրա աճյունն անգամ վառվի և մոխրանա այս աշխարհում, ինչպես նրա կյանքն է այրվել ու մոխրացել արևի մի բեկորի պես, շողալով երեսուն հազար օր շարունակ:

Իսկ այդ ժամանակ, մի այլ տեղում, գուցե հենց նույն Նալիչնայա փողոցի վրա, կանգնած կլինի մի փառահեղ շենք՝ կամարակապ մեծ ցուցանակով, որի վրա ոսկեգույն, արևոտ տառեր՝ «Ծննդատուն

№ 9999»: Եվ յուրաքանչյուր ոոպեն մեկ, դրա բարձր կտուրի վրա, վեր կխոյանա վարդագույն դրոշակը՝ ավետելով աշխարհին, որ ծնվեց ևս մի մարդ՝ ապրելու համար աշխարհիս երեսին երեսուն հազար օր: